

ընդունեցին և քարոզեցին : Վաղիկա-
 յի նաւաւարը երբ իւր տիրոջը մա-
 հուանէն և յօրութենէն ետքը դա-
 տաստանի առջեւ քաջեցին բերին ,
 Սոկրատի խօսքը կ'ըսէր նա միշտ, թէ՛
 լաւ է լ'ստուծոյ հնազանդել՝ քան
 մարդոց (1) : Խղճի ազատութեան բոլոր
 մեծութիւնը և վսեմութիւնը յայտ-
 նելու համար պէտք էր բոլոր մարտի-
 բոսաց և կրօնի գիւցազանց խօսքերը
 հոս մէջ բերէինք, որոնք իրենց արիւ-
 նովը գրուած են : Լ'յսպէս քրիստո-
 նէութիւնը երեք դար իւր ամենա-
 դառն տառապանքներուն մէջ մարդ-
 կային մտաց և խղճին ազատութիւնը
 հաստատեց , եւ առաջին անգամ
 Հռոմայու կեսարը սահմանի մի հան-
 դիպեցաւ , ուր տեղ վախճան կ'առ-
 նոյր իւր իշխանութիւնը, և այս սահ-
 մանէն չկրցաւ անդին անցնիլ :

(Շարունակելէ)



ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՅ ԽՆԴԻՐԸ

Լ'հաւաստիկ, ինչպէս խոստացանք
 անցեալ ամսաթերթիս մէջ, կը փու-
 թանք ուղղել նախորդ թուով մի Ս.
 Տեղեացս խնդրոյն վրայ տրուած սխալ
 տեղեկութիւնները, որոնք անստոյգ
 աղբիւրներէ առնուած էին :

Լ'նցեալ օգոստոս ամսոյն 17ին էր
 հասաւ Սեծ. Սիւնիֆ էֆէնտին, և
 անկէ առաջ եկած էր Վամասկոսէն
 Վսեմ. Սէհմէտ Քէշիտ վալի փաշայն
 և Վաղղիոյ հիւսպատոսն հրամանաւ
 Վսեմ. Վեսպրանին իբր 'ի կողմանէ

Լ'ատին կղերին քննութեանց ներկայ
 դանուելու պաշտօնիւ : Այն ամսոյն
 23ին գնացին միաբան 'ի Քէթէէմ,
 նոյնպէս և Հայոց և Յունաց Պատ-
 ըրաբքունք և թարգմանք . և լատի-
 նաց կողմէն երկու կարգաւոր եւ
 թարգմանն : Հին Լ'ատինաց վանքը
 սակաւ մի հանգիստ առնելով՝ իջան
 սուրբ Լ'յրի եկեղեցին նոյն դռնէն
 անցնելով՝ որ կէս դարէն 'ի վեր վե-
 ճի տակ է Հայոց և Լ'ատինաց մէջ,
 և Սրբազան Պատրիարքն Սիւնիֆ է-
 ֆէնտինն ու շաղրութիւնը հրաւիրեց
 անոր խնդրոյն վրայ՝ իբր սկզբնապատ-
 ճառ բոլոր վէճերուն և անկարգու-
 թեանց . ըստ որում Լ'ատինք սուրբ
 Լ'յրը մտնելու համար իրենց ունեցած
 ճամբէն ու դռնէն շանցնելով, վերջի-
 շեալ դուռը բռնութեամբ բացած
 են ժամանակին և մեր եկեղեցւոյն
 մէջէն կ'անցնին կը դառնան :

Սուրբ Լ'յրն իջնելով քննութեան
 կ'առնուն զայն որ բուն վէճի տեղն է
 երեք աղգաց մէջ, ուր Լ'ատինք կրակ
 ձգելով այրեցին կանթեղները և յե-
 տոյ գողացան Հայոց 12 պատկերքը
 և Յունացմէ երկու հատ, պատճառաւ
 հնացեալ վարագուրի մի որ երեք աղ-
 գաց կը վերաբերի, և Լ'ատինք կ'ու-
 զէին զայն առանձինն նորօգել : Հին
 յայտնեց Սեծ. Սիւնիֆ էֆէնտին
 թէ Քարձրագոյն Վրան կողմէն նոր
 վարագոյրը գալուն՝ Հայոց մնացեալ
 պատկերներն ալ տեղը պիտի դրուին
 առաջուան պէս :

Լ'նկէ Վառասնից այրը երթալով
 և աչքէ անցընելով կը դառնան Յու-
 նաց վանքը հանգիստ առնելու . եւ
 կը սխտին հոն նոյն այրին վրայօք հար-
 ցափորձեր ընել : Յունաց պատրիար-
 քը կը յայտնէ թէ, Լ'ատինք 1839 թը-
 ւին յիշեալ այրին մէջ վառօդ դնե-
 լով ուղեցին փղընել որ յետոյ շինե-

(1) Գարձոց . Ե . 29 :

լու առիթ ունենալով իրենց սեփա-
կանեն : Այս փորձը թէպէտ մի քիչ
վնասեց այրին , բայց Հայք և Յոնք
իմանալով բողբեցին , եւ անոր հա-
տարակաց ուխտատեղի ըլլալը ապա-
ցուցանելով , հրաման եկաւ Ռ . Գրե-
նէն և երեք ազգաց ծախւք նորոգե-
ցաւ : Այն գէպքը վիպեց նա եւ
Լ'մեն . Սրբազան Պատրիարքն մեր , և
ըսաց թէ , մինչեւ մօտ ժամանակներս
գիւղացիք իրենք կը տանէին իւղ և
մսմ և կը լուսէին : 1866 ին կրկին
փորձ մի րբին Ատափնք այրը իւրացը-
նելու . կրկին դատ բացուեցաւ եւ
մեր Հայոցս և Յունացքով գտնուած
վաւերական թղթերով հաստատուե-
ցաւ հասարակաց ուխտատեղի ըլլա-
լը . և տեղւոյս քաղաքական ժողովոյն
հանրագրութեամբ Ռ . Գուռը տե-
ղեկագրեցաւ , և հրաման եկաւ որ
Ատափնաց նոր շինած պատը բանդուի ,
որու համար էր այն ժամանակի ծա-
գած վէճը , և իզգէթ փաշայն հրա-
մանը կատարեց առջի վիճակին դար-
ձընելով յիշեալ Այրը : Այրիու տա-
րիէն յետոյ Ատափնք կրկին ձեռնա-
մուխ եղան նոյն Այրը բոլորովին իւ-
րացնելու , յորմէ ստիպեալ Հայոց
և Յունաց պատրիարքունք կրկին բռ-
ղոք ըրին առ Ռ . Գուռն , և ահա այս
բողբոցն պատասխանն է ըսաւ , եկած
նոր հրամանագիրն զոր սկսած էք ՚ի
գործ դնել համեմատ կամաց Բարե-
գութ Տէրութեան :

Յունաց վանքէն ելնելով սուրբ
Օննդեան դրսի մեծ հրապարակը
կու գան , հոն Սրբազան Պատրիարքն
մեր բլրի նման աղբիւսը ցոյց տալով
Աեծ . Սիւնիք էֆէնտինն կ'ըսէ . « Այս
տեղս Հայոց գերեզմանատան մէկ
մասն է որուն համար շատ անգամ
բողբած ու դատ վարած եմք Յունաց
հետ եւ մերն ըլլալը հաստատելով

պարսպի մէջ ամփոփել ուղած եմք .
բայց ամեն անգամ ալ Յունաց մի-
աբանութիւնը արգելք եղած է , և
չէ թողուցած որ մինչեւ անգամ մաք-
րել տանք տեղը ապականութենէն որ
հասարակաց առողջութեան և ս վնա-
սակար է : » Աեծ . Սիւնիք էֆէնտին
իրաւունք կուտայ , զարմանալով մի-
անգամայն Յունաց բռնութե վրայ ,
որոնք ժամանակ ժամանակ ցոյց տուած
են այլոց սեփականութեանց ազատ
գործադրութեան մասին : Այսչափ
քննութիւններ եղան Ռեթլէէ մի մէջ
վէճի տակ եղած խնդրոց վրայօք :

Օգոստոսի 24 ին տեղի բնեցաւ
առաջին ժողովը ՚ի պալատ քաղաքա-
պետին , ուր ներկայացան նոյն անձին-
քը երեք միաբանութեանց կողմէն ,
այլ և Գաղղիական հիւպատոսն Գա-
մակոսի . և խնդիրն էր Քառասնից
Այրին վրայօք : Հոն Աեծ . Սիւնիք
էֆէնտին Հայոց և Յունաց արդէն
ծանուցեալ վաւերագիրները մէջ բե-
րելէն եւ անոնց հաստատութիւնը
ընդունուելէն յետոյ , Ատափնաց կողմէ
տրուած ցուցակ մի ևս մէջ բերելով
թուականներու շաբբ մի կը կարդայ ,
որոնք իբր թէ նոյն թուականներուն
մէջ մէկ մէկ վաւերագրեր ու հրո-
վարտակներ ընդունած ըլլան Ատափնք
յիշեալ Այրին համար : Օարմանալով
Ս . Պատրիարքն մեր կը հարցնէ թէ՛
« Այդ թուականները հէօճէթներու
ու հրամանագրերու են : Ա կայագիր-
ներ են , կ'ըսէ Սիւնիք էֆէնտին , զո-
րոնք Ատափնք ստացեր են ուխտի ե-
կող Աւրոպացի կոմսերէ իշխաններէ
և երեւելի ճանապարհորդներէ , որոնք
տեսած են նոյն Այրը և կը վիպեն
թէ՛ յատին կարգաւորք հոն պաշտօն
կը վարեն եղեր : Աեզ ընդունելի չեն
առոնց վիպութիւնը : կը կրկնէ Արք-
բազան Պատրիարքը , ըստ որում ոչ

մեր աղդէն են և ոչ մեզ կրօնակից, ուխտաւորք ինչ որ լսեն իրենց կարգաւորներէն՝ նոյնը կ'ըմբռնեն և ըստ այնմ կը վկայեն: «Վիտէր Սիւնիֆ էֆէնտին ևս այն թղթերուն ինչ արժէք ունենալը: Յետոյ ուրիշ հնագոյն թուղթ մի մէջ կը բերէ արաբերէն լեզուով գրուած, որ հնութեան երեսէն եղծուած ու գրեթէ անընթեռնելի եղած էր. այս թղթին համար Վատինը կը վկայեն թէ՛ Վախագոսի Սուլթանները տուած են, որ եթէ ստոյգ եւս ըլլար, դարձեալ արժէք մի չէր կրնար ունենալ: «Վրան կողմէն տրուած հէօճէթներուն քով: Սուտի այս քննութիւններէն յայտնի ըլլալով Քառասնից Այրին հասարակաց սեփական և բոլոր քրիստոնէից ուխտատեղի ըլլալը ըստ հաստատութեան Հայոց և Յունաց ձեռքն եղած հրամանագիրներուն, ժողովը լուծուեցաւ առանց վերջին որոշում մի տրուելու:

Հետեալ օրը երկրորդ նիստն եղաւ նոյն պալատին մէջ, և խնդրոյ առարկայ էր սուրբ Յակովբայ եկեղեցւոյ մէջ Վատինաց պատարագելուն արգիլուիլը: Այս ժողովոյս մէջ յիշեալ միաբանութեան կողմէ մարդ չէր կանչուած, և միայն Վամասկոսի հիւպատը ներկայ էր: Սիւնիֆ էֆէնտին սկիզբն տուաւ քննութեան եւ հարցուց Ս. Պատրիարքին. «Որչափ ժամանակէն 'ի վեր է Վատինաց Սարկազուս եկեղեցւոյն մէջ պատարագընելու սովորութիւր, և ո՞ր իրաւամբք ստացեր են այդ թոյլտուութիւնը, և որո՞նք են արգելման պատճառները:» Այս հարցմանց պատասխան տուաւ Սրբազանը. «Բնեմ համար ձեռնութեամբ առանց բան մի ծածկելու, քանի որ անժխտելի իրաւունքներ ունիմ: Հարիւր տարիի չափ կայ

և ոչ աւելի որ իմ նախորդներս թոյլտուութիւն ըրած են Վատինաց տարին անգամ մի պատարագընելու մեր երկու եկեղեցւոյն մէջ, և այս թոյլտուութեան միմիայն պատճառ եղած է այն ժամանակներս մեր և լատին միաբանութեանց փոխադարձ սէրը, որով իրարու հետ կապուած էին: Բայտ որում իրենք ալ այս շնորհմանս փոխարէն թոյլտուութիւն ըրած էին մեր ցամաքային ուխտաւորաց, որոնք Վաղարէթէն անցած ժամանակին մեծ մարդասիրութեամբ կը հիւրասիրէին զիրենք, և իրենց եկեղեցւոյն մէջ կը թողուին որ մեր քահանաները աղգային լեզուաւ իրենց ժամերգութիւնն մինչեւ անգամ աստուածային պաշտօնը կը կատարէին 'ի մը խիթարութիւն մեր ուխտաւորաց: Բայց անոնց այս մարդասիրութիւնը երկար ժամանակ չտեւեց, մեր ուխտաւորաց այն ճանապարհէն գալու երթեւեկութիւնն ալ նուազեցաւ, և հիմակ հոն հանդիպող սակաւաթիւ Հայ ուխտաւորաց ոչ թէ աւետարան կարդալու կը ներեն, այլ և ոչ իսկ իրենց վանքը կ'ընդունին:

Նոյնպէս հոս Վյն-Բէրիմ (Յուլ հաննու ճնուհդ) ըսուած գիւղը վանք մի ունին Վատինը որ ուխտատեղի է քրիստոնէից, ուր տարին անգամ մի մեր ուխտաւորները կը խրկեմք, որոնք չորս հինգ օր կարգաւ կ'երթան ուխտ ընելու: Հոն առջի ժամանակները մեր քահանայք հոգեւորական պաշտօն եւս կը կատարէին, իսկ անցեալ տարիները և ոչ աւետարան թողուցին որ կարդան, թէպէտ եւ բոլոր քրիստոնէիցս աւետարանն մի և նոյն վարդապետութիւնն կ'ուսուցանէ. բայց որովհետեւ վանքը իրենց սեփական է, իրաւունք չունեցանք բողբելու:

Վստնցմէ՛ ՚ի զստ ուրիշ շատ զըկու-
 զու թիւններ ունեցանք և կ'ուսնենանք
 միշտ Վատինաց կողմէն, զարմնք յիշե-
 լու համար ասկէ աւելի յարմար ա-
 ռիթ չեմ կրնար գտնել, քանի որ իմ
 Բարեգուծ Տէրութեան կողմէն քրն-
 նիչ եկած էք, սրարտաւոր էք իմանալ
 Տէրութեան հարազատ և հաւատաւ-
 րիմ հրատակացս կրած զըկողու թիւն-
 ները, և ետ դառնայնուգ իմացընէք
 զանոնք Օգոստոսիտ Տիրոջս և ա-
 զաչէք որ իւր գթութիւնը առ մեզ
 դարձրնէ: Վհաւասիկ մեր կրած զըր-
 կանքները:

Ա. Վերոյիշեալ Վյն-Քերիմ գիւ-
 ղին մէջ յառաջ ժամանակաւ վանք
 մի ունէինք, ինչպէս մինչեւ ցայսօր
 գեռ գեղացի Ֆէլահէք կը վկայեն.
 և Սաղրբոյի արաբաց յարձակմանց
 պատճառաւ բարձի թողի եղած և
 աւերուած կը կենար, հիմակ քանի մի
 տարի կայ որ Վատինք սկսած են ախ-
 բել անոր:

Բ. Ինթիլէմի եկեղեցւոյն հիւսի-
 սային դասուն մէջ եղած միջնագու-
 ռը, զոր Վզիպոսի իշխանութեան
 հրամանաւ կրկին անգամ բացին,
 որուն մշտնջենապէս գոց մնալուն
 հրովարտակն և հէօճէթները ամբողջ
 քովերնիս կը գտնուին, եթէ բարե-
 հաճիր կրնար տեսնել զանոնք, և գը-
 րեթէ մեր ժողովուրդը կ'սկսկրտելով
 կ'անցնին կը դառնան:

Գ. Նոյն եկեղեցւոյ սուրբ Վյրին
 հրկիզութիւնը և մեր Վ2 սրտկերաց
 գողցուիլը:

Դ. Նոյն Վյրին ատիճանները աւ-
 լելու համար մեր ունեցած իրաւուն-
 քը խափանել ուղեղնին, և գլուխ տա-
 նելու համար զինեալ կրօնաւորաց
 խումբ մի հոն բերելնին, ինչպէս գի-
 տէ Վսեմ. Քեամիլ փաշայն, և կրը-
 նար սառգութիւն իմանալ Վլի պէ-

Ե

կէն որ բարեկարգութիւնը պահե-
 լու համար հոն խրկուած էք. բայց
 Վատինք անոր իշխանութիւն անգամ
 յանդգնեցան շճանաչել, եւ միայն
 Վաղղից հիւպատոսին հրամանացը
 կը հնազանդութիւն կ'ըսէին:

Ե. Սիօնի գերեզմանատան խնդիրը
 ուր անգ Վղղէթ փաշայի օրով հա-
 մարձակեցան Վատինք երկու դուռ
 բանալ մեր գերեզմանատան մէջ աղ-
 քաց իրաւունքը ոտնակոխ ընելով:
 Նլ թէպէտ յիշեալ փաշայն անոնց
 բրած անիրաւութիւնը աջօր տեսած
 ատեն ըսաւ թէ՛ « Հայոց գերեզմա-
 նատան վրայ դուռ բանալու իրա-
 ւունք չունիք, քանի որ հիւսիսային
 կողմը արքունի պողոտայ կայ: Նլ ես,
 կ'ըսէր նա, Վրուսաղեմի Սութա-
 սարըք ըլլալով հոս ձեր շինած դրո-
 ները չեմ ճանչնար: » Վյսու ամե-
 նայնիւ որմնագիրները անոր երեսն ՚ի
 վեր նայելով իրենց դործը կը շարու-
 նակէին, և չէր համարձակէր շինու-
 թիւնը զաղբեցընել իւր իշխանու-
 թեան ուժովը եւ մեր իրաւունքը
 պաշտպանել: Վնոնք պաշտպան ունին
 իրենց Վաղղից հիւպատոսը, (ըսաւ
 Սրբազան Պատրիարքը) որու զօրութիւն
 այս անիրաւութիւնները կ'ընեն, դուք
 ալ սրարտաւոր էք Օսմանեան մե-
 ծաղօր Տէրութեան կողմէն մեզ պաշտ-
 պանել: Վսկէ աւելի բան մի չեմ
 կրնար ընել, սրատասխանեց Վղղէթ
 փաշայն, և ոչ իմ Տէրութիւնս կրնայ
 դուք ալ եթէ կ'ուղէք կրնար ձեզ
 ուրիշ տէրութեանէ մի պաշտպանու-
 թիւն գտնել: Վյս սրատասխանիս վը-
 րաց սա միայն աւելցուցի ըսելով, թէ
 իմ Տէրութիւնս ամենեւին տկար չէ
 անիրաւութիւն մի զսպելու համար,
 այլ դուք էք որ կը տկարացընէք Տէ-
 րութեան զօրութիւնը: Նլ խնդրեցի
 իրմէն որ գրով տայ ինձ այս սրտօնու-

26

Թիւնը , բայց նա վախցաւ ինչպէս որ բնական է : Անոր վրայ երկու անգամ բողոք ըրի առ Ռ . Գուռն , բայց օգուտ մի չտեսայ , որով սոուգուեցաւ Իզդէթ փաշային խօսքը :

2. Գարձեալ զըկողուԹիւն կրեցաք Լատինացմէ (Յունաց հետ, երբ յափշտակեցին անոնք հասարակաց այն սուրբ տեղը Գէթսէմանի ձորին մէջ, ուր տեղ Աստիա (Վրիստոս) ազօթած է . և հակառակ մեր երկու ազգացս բողոքին զոր ԱզգիՖ փաշային մատուցինք , անոնք ոչ միայն տիրեցին տեղւոյն՝ այլ եւ պարիսպ դարձուցին բոլորտիքը , բանի տեղ չգնելով Փաշային հրամանը որով շինուԹիւնը կ'արգիլէր :

Բոլոր այս զրկանացս և անիրաւուԹեանցս սիրով համբերեցինք յոստերնիս Աեծազօր Աուղանին արդարուԹեանը վրայ դնելով՝ Թէ օր մի հարկաւ իւր արքունի գէթուԹեամբ մեր դատը արդարուԹեամբ կ'որոշէ : Բայց երբ համարձակեցան Լատինք իմ եկեղեցիս ալ երկու անգամ ա նարգել , ալ համբերուԹիւնս հատաւ և միտքս դրի որ մեր եկեղեցեաց մէջ պատարագ ընելու համար անոնց տրուած շնորհը ետ առնում : Այսն զի , կրկնեց Աբբազան Պատրիարքը ներուզուԹիւն խնդրելով ԱլեքիՖ էֆէն տիէն խօսքը երկարելուն համար . առաջին անգամուն՝ որ Ազգիստոս կը գանուէր Գաղղիոյ հիւպատոս Լատին տը Պարրիէրը ԱզգիՖ Փաշայէն խուճը մի կանոնաւոր զօրք բերել տալով՝ ՏէրուԹեան հպատակ ազգային վանքիս դիմաց շարել կուտայ՝ որպէս Թէ ինքը գալուն և երթալուն ժամանակը զինքը պաշտօնապէս բարեւեն , եւ քանի մի զսպիթիէ եւս եկեղեցւոյն դուռը կայնեցընել կուտայ : Այսքանին գոհ չըլլալով աւելի պաշտօնական


կերպարանք մի տալու համար , Լատին եկեղեցւոյ մէջ դնելու առանձին արտօնուԹիւն ունեցած իւր պաշտօնական աթոռն ալ հետը կը բերէ իմ ազատ եկեղեցւոյս մէջ դնելու , և բոլոր ազգաց իրաւունքները ոտքի տակ առնելով և զիս և իմ ազգս Աեծազօր ՏէրուԹեանս աչքին կասկածելի ցուցնելու համար պաշտօնական (ունիֆօրմա) զգեստները հագած այնպէս կու գայ , որ բնաւ եղած բան չէր :

Այս ցաւալի լուրը Թէպէտ և իմացայ Ազգիստոսի մէջ , բայց ինչ կրնայի ընել , արդէն եղածն եղած էր . նա իւր նպատակը ՚ի գործ դնելու միջոց գտած էր :

Հետեւեալ տարին իմացայ հեռուանց Թէ յիշեալ հիւպատոսը նոյն հանդիսիւ ու պաշտօնապէս գալու դարձեալ միտք ունի . ուստի 20 օր յառաջ իրեն մէկ սերա բարեկամը քովս կանչել տալով , և առջի տարուան եղած դէպքերն իրեն պատմելով՝ լուր խրկեցի իրեն որ եթէ դարձեալ այն կերպով գալու լինի՝ չեմ ընդունիր զինքը , վասն զի այլ է բարեկամուԹիւնն ըսի , և այլ է պաշտօնականուԹիւնը որու մէջ կրնայ իաւունքներ զոհ ըլլալ , և քաղաքականուԹեան դէմ անպատեհուԹիւններ ծագիլ : Անցեալ տարուան բերած զօրքերուն զսպիթիէներուն , պաշտօնական աթոռին և ունիֆօրմայով գալուն համար իրեն կը բողոքեմ միայն ՚ի շնորհս իւր բարեկամուԹեանը , բայց եթէ մտիկ ընելու չըլլայ , այն ժամանակ տեղւոյս ԱռաւարտուԹեան կը բողոքեմ , վասն զի անոր այն ընթացքը իմ իրաւանցս կը դպչէր : Հիւպատոսին բարեկամը խօսք տուաւ ինձ խաղաղուԹեամբ գործը լրացընելու՝ երեք չորս օր պայմանաժամ խնդրելով : Աս վեց օր պայմանաժամ տուի , բայց նա ոչ վեց և

ոչ տասն օրէն երեւցաւ . ուստի լուր խրկելով կանչեցի զինքը ու չգալուն պատճառը հարցուցի : Աս սկսաւ զանազան պատճառներ մէջ բերելով մի ամտեցրնել զիս . և դարձեալ երեք օր պայմանաժամ խնդրեց որ երթայ համոզէ զհիւսպատոսը որ իւր նպատակէն ետ կենայ : Գարձեալ վեց օր անցաւ և երբ շերեւցաւ բարեկամը բողբջա գիր մի խրկեցի առ Ազգի՛ք փաշայն , և անոր հետ մէկ տեղ անցեալ տարուան ըրածին համար բողբեցի , ցուցրնելով թէ՛ հիւսպատոսին այս ընթացքը թէ՛ մեր սովորութեան և թէ՛ քաղաքականութեան հակառակ է . և որովհետեւ ի՛ . Գրան հպատակ ժողովուրդ մի եմք , չեմք կրնար ընդունիլ զինքը մեր եկեղեցւոյ մէջ եթէ պաշտօնական շքով եւ զինուորական հանդիսիւ գալու լինի . վասն զի կրնայ այն ժամանակ Տէրութիւնը իրաւամբ կասկածել մեր վրայ , իբրու թէ՛ Գաղղիոյ պաշտպանութեան ներքեւ գտնուելու տրամադիր եղած ըլլամք :

(Սնայեալն գաւ սիսա)



Թ Շ Ո Ւ Ա Ռ Ո Ւ Թ Ի Ի Ն

Սարգիկ առաւել լաւ կը համարին մեռանիլք քան առօրեայ միանգամայն եւ անտանելի կենաց մը վայելու մը :

Եթէ անհատիմը համար այս որոշումը իրաւացի է , ապա առաւել իրաւացի պիտի ըլլայ ամբողջ ազգիմը համար :

Արքան որ աննշան է անհատի մը կեանքը , այնքան նշանաւոր և երեւելի է ամբողջ ազգի մը կեանքը :

Անհատի մը համար բացառութիւն մ'ալ ներելի է , իսկ ամբողջ ազգի մը՝ ոչ երբէք :

Այրբ ամբողջ ազգ մը թշուառ է , իմացիր որ անոր ներքին եւ բարոյական կեանքը խիստ մեծ վտանգի մէջ է :

Արքան որ անհատի մը թշուառութիւնը դիւրաւ կը դարմանուի և անոր առաջը կ'առնուի , այնքան ալ դժուարին է ամբողջ ազգի մը թշուառութեան դարմանուիլն ու առաջն առնուլը :

Փոքրիկ առուակի մը խաղացքը խափանելը արութեան պէտք չունի , յորդառատ և արագընթաց գետի մը հոսանքն արգելուլ պզտիկ դործ չէ :

Աշխարհս՝ ըսաւ երեւելի հեղիւնակին մէկը , թշուառութեան հովիտ մը , վիհ մ' է :

Ինդունինք այս ծանր բայց ճշմարիտ խօսքը որ վերի բոլոր ըսածներս ջրել կ'երեւի եւ երանութեան յոյսը մարդկանց սրտէն կը ջնջէ : Այս պէտք է ընդունինք , քանի որ այնպէս կը տեսնենք , Իայց սակայն ճշմարիտ է անոնց համար , որ կուրօքէն անձամբ զիրենք կը նետեն այս վհին մէջ :

Սարգիկ կը ծնին այս թշուառութեան հովտին մէջ , բայց բարոյապէս անոր սահմանէն դուրս կրնան ապրիլ եթէ կամին :

Սարգուս միտքն ու կամքը համաձայնութեամբ եթէ հաստատուն և անփոփոխ սկզբանց հետեւին , նոր բարոյական աշխարհ մը կ'ստեղծեն , որ բնականէն տարբեր է . եւ կ'ապրին հոն , եթէ կարելի է այսպէս ըսել , երջանկութեան ծոցը :

1870 թուականիս ներկայ պատերազմը՝ որ դեռ վերջացած չէ , կը ճըշմարտէ լիովին մեր ըսածները :

Պատերազմ եւ թշուառութիւն համանուն բառեր չեն :